ԼՈՒԾՈՒՄ ՊԵՏՔ Է ԳՏՆՎԻ

Ինչպես հայտնի է, նախատեսվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում քննարկել Ազգությունների խորհրդի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարցերով զբաղվող հանձնաժողովի ինֆորմացիան: Հայտնի է նաև, որ արդեն կայացվել են Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի դեպուտատական խմբերի հանդիպումները այլընտրական լուծումներ գտնելու համար: Դրանք կայացան Մ. Ս. Գորբաչովի նախաձեռնությամբ: Այդ հանդիպումների բնույթի, դրանցում շոշափված հարցերի մասին Արմենպրեսի թղթակիցներ Լ. Ազրոյանին և Ջ. Բալագյոզյանին պատմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ Հ. Ա. Պողոսյանը:

Իրոք, այդ հանդիպումների նպատակն էր, իսկ այդպիսի երեք հանդիպում կայացավ, որոնել փոխադարձաբար ընդունելի դիրքորոշումներ, այսպես ասենք՝ մի ոսկե միջին, որը ձեռնտու լիներ երկու կողմին էլ: Ընդ որում, մեր դեպուտատական խումբը ելնում էր Մ. Ս. Գորբաչովի այն դրրությից, որ ղարաբաղյան պրոբլեմի լուծման գործում չպետք է լինեն ոչ հաղթողներ, ոչ պարտվողներ: Սակայն առաջին իսկ հանդիպումից հստակորեն զգացվեց, որ ադրբեջանական դեպուտատները պատրաստ չեն, ըստ էության, չեն կամենում գտնել փոխադարձաբար ընդունելի լուծում: Ամեն անգամ մեր ընդդիմախոսները միևնույն պահանջն էին առաջ քաշում. ԼՂԻՄ-ը, չնայած ինքնորոշման մասին մարզային խորհրդի նստաշրջանի սահմանադրական որոշմանը, մնում է Ադրբեջանի կազմի մեջ, որը «պարտավորվում է երաշխավորել բոլոր պայմանները մարզի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման համար, ինչպես նաև հայ բնակչության անվտանգությունը»: Ինքներդ եք տեսնում, որ այդպիսի հավաստիացումները այն պայմաններում, երբ Արցախը գտնվում է շրջափակման մեջ, չեն կարող չընկալվել այլ կերպ, քան որպես երկերեսանի: Ինչպես կարելի է բարեկամություն ու անվստահություն երաշխավորել ժողովրդի կոկորդը սեղմած:

Արցախի դեպուտատական խումբը առաջադրեց իր այլընտրանքը՝ ԼՂԻՄ-ը հրաժարվում է մարզն իր պատմական մասին՝ Հայաստանին վերամիավորելու իր բնական պահանջից, բայց պահանջում է դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ից: Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է միութենական տարածք:

Այդ երկու հակադիր դիրքորոշումները ոչ մի կերպ չեն մերձենում: Ընդ որում, Արցախի դեպուտատական խումբը իր առաջարկությունների հիման վրա տարբերակներ է առաջ քաշում:

Կողմերի մեջ տարաձայնություն առաջ բերեց, ասենք այսպես, Հատուկ կառավարման կոմիտեի ենթակայության հարցը: Ադրբեջանի դեպուտատական խումբը գտնում է, որ Հատուկ կառավարման կոմիտեի կազմի մեջ հարկավոր է ընդգրկել այդ հանրապետության և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչներ: Նման տարբերակը նշանակում է մարզի ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և ի չիք դարձնում ազգային ինքնավարության և ինքնորոշման համար արցախցիների ծավալած շարժումը:

Մեր ընդդիմախոսները առավել հաճույքով քննարկեցին գաղթականների հարցը, դրանում տեսնելով անչափ սուր պրոբլեմներից խույս տալու հնարավորություն: Թե մեկ և թե մյուս կողմից գաղթականները քիչ չեն, և այդ փաստն ինքնըստինքյան վկայում է մարդկային մեծ դրամայի մասին: Զնվազեցնելով մարդկանց վիճակի դրամատիկությունը, մենք այդուամենայնիվ համարում ենք, որ գաղթականների հարցը չի կարելի քննության առնել ԼՂԻՄ-ի հետագա կարգավիճակի տեսանկյունից: Գաղթականները ճգնաժամի ձգձգման ուղղակի հետևանքն են, կենդանի հանդիմանություն կենտրոնական իշխանությունների հասցեին, որոնք անընդհատ ուշացրին հարցի լուծումը, ինչով էլ զգալի չափով սրեցին երկու ժողովուրդների դիմակայությունը: Գաղթականների պրոբլեմը հարկավոր է լուծել անկախ այն բանից, թե ինչպես կլուծվի ղարաբաղյան հարցը: Եվ այստեղ երկու կողմերը հանգեցին միանշանակ կարծիքի՝ անհրաժեշտ է ստեղծել համատեղ հանձնաժողով, որն զբաղվի բնակության վայրերից տասնյակ հազարավոր մարդկանց հեռանալու պատճառով առաջացած բոլոր պրոբլեմներով: Չէ՞ որ խոսքը միայն մարդկանց բնակարանով ապահովելու մասին չէ: Բերեմ մեկ օրինակ, հայտնի իրադարձությունների կապակցությամբ Ստեփանակերտում բնակչության թիվն աճել է 20 տոկոսով: Իսկ դա նշանակում է, որ իշխանությունները պետք է ամենահոանդուն կերպով հոգ տանեն նաև սոցիալական ու կենցաղային ոլորտների զարգացման մասին:

— Ընկեր Պողոսյան, իսկ ինչու ԼՂԻՄ-ի ու Ադրբեջանի դեպուտատական խմբերը չփորձեցին հանդիպել իրենց նախաձեռնությամբ, զբաղվել «ղարաբաղյան պրոբլեմի» լուծման փոխադարձաբար ընդունելի ուղիների որոնմամբ:

— Ինձ համար դժվար է միանշանակ պատասխանել՝ դա ճիշտ կլինի, թե ոչ: Անձամբ ես գտնում եմ, որ այդպիսի հանդիպումների անհրաժեշտություն չկա: Թեկուզև այն պատճառով, որ Ադրբեջանի դեպուտատական խումբը ոչ մի այլընտրանք չի ընդունում: Ադրբեջանը այլ դիրքորոշում չունի, բացի վերն արդեն շարադրածից: Համաձայնեցեք, որ նման պայմաններում անհեռանկարային բան է երկխոսություն վարելը:

— Ո՞րն է, Ձեր կարծիքով, դրա պատճառը:

— Ես գտնում եմ, որ ադրբեջանական դեպուտատները հիմնականում առաջնորդվում են ոչ այնքան նրանով, ինչ թելադրում է ռեգիոնում ստեղծված իրավիճակը, որքան տեղի են տալիս իրենց ժողովրդական ճակատին, որը, փաստորեն, կառավարում է հանրապետությունում: Ըստ էության, հանրապետության ղեկավարությունը ընդունել է իր թուլությունը և ընկրկել իր ժողովրդական ճակատի պարագլուխների առջև, սանվերապահորեն ընդունելով բոլոր տասը պահանջները Հայաստանի շրջափակումը վերացնելու դիմաց:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Մ. Ս. Գորբաչովը Ադրբեջանի դեպուտատական խմբից պահանջեց անհապաղ վերացնել շրջափակումը: Գերագույն խորհրդի բոլոր անդամների պաշտպանությունը գտած այդ պահանջը չէր կարելի չկատարել: Եվ Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարությունը իր հեղինակությունը փրկելու համար ուրիշ ոչինչ չգտավ անելու, բացի ժողովրդական ճակատի առջև ընկրկելուց:

— Հաճախ ձայներ են լսվում, թե հարկ չկա նստելու բանակցությունների սեղանի շուրջը...

— Համատեղ ուղիների որոնում պետք է լինի: Այստեղ երկու կարծիք չի կարող լինել: Գործին, երկու ժողովուրդների շահերին մեծ վնաս են պատճառում բանակցությունները դադարեցնելու գոռոզամիտ պահանջները: Դրանք վնասակար են, միշտ և բոլոր ժամանակներում լավագույնը եղել և մնում են ծագած պրոբլեմների խաղաղ լուծման ուղիները: Այստեղ՝ Մոսկվայում, քաղաքական դժվարին պայքար է մղվում, «արցախյան հանգույցի» լավագույն և փոխադարձաբար ընդունելի լուծումներ գտնելու համար: Գտնում եմ, որ նման ծայրահեղ և առարկություն չընդունող դատողությունների վտանգն ակնհայտ է: Դրանք ձեռնտու են միայն նրանց, ում շահավետ է ռեգիոնի իրադրության խարխլումը:

— Եվ, այդուամենայնիվ, ընկեր Պողոսյան, հանրապետության և ԼՂԻՄ-ի հատարակայնությանը հետաքրքրում է, թե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի հանձնաժողովը և Ադրբեջանի ու ԼՂԻՄ-ի դեպուտատները ինչ կբերեն երկու պալատների նոյեմբերի 13-ին կայանալիք լիագումար նիստ:

— Սա բազմաթիվ անհայտներով հարց է: Ամեն ինչ ցույց կտա հանձնաժողովի զեկուցումը, լայն ու շահագրգիռ քննարկման ընթացքը, որը, հույս ունենք, կկայանա: Կարծում եմ, բոլորի համար անվիճելի է մեկ բան՝ ղարաբաղյան ճգնաժամը ծայրաստիճան և չարդարացված կերպով ձգձգվել է, լուծում պետք է գտնվի: Միայն լուծում և ոչ թե, ինչպես միշտ, կիսամիջոցներ:

(Արմենպրես)